

քան զՊղատոնն» անձն ըլլայ Մարկիոնը, որով ինչ որ ըսած է Եզեիկը Պղատոնի մասին, այդ բոլորը Mariès կը հասկնայ Մարկիոնի մասին: Mariès-ի մէկ ուրիշ սխալն ալ այն է որ հասարակ զոր բառը կը թարգմանէ հորոհ համար, Մէկ տողի մէջ այսքան սխալ կարողաւ է այս, քան սխալ թարգմանելէ յետոյ, ի հարկէ սխալ արդիւնքի պիտի հասնէր: Ես Եզեիկի յիշեալ հատուածը իմ և Mariès-ի բացատրութիւններով հանդերձ ցոյց տուի անձամբ Աբեղեանին, Մանանդեանին, Հ. Ակինեանին, Շահազադեին, Խաչատրեանին և Ալազլէզեանին, որոնք մեր լաւագոյն հայագէտներն են Երևանի մէջ և բոլորն ալ հասկցան այնպէս, ինչպէս ես եմ հասկցած: Հետեւաբար հիմայ ալ կը պնդեմ՝ որ Եզեիկը գրած է ամբողջ գիրք մը Պղատոնի դէմ, որմէ կը ծնան միայն վերջին վեց տողերը:

Mariès-ը կողմէ նոր սրբագրութիւններ ալ կ'առաջարկէ Եզեիկի մէջ. օրինակ՝ էջ 6. գի մի՞ մթաբոն՝ որ զբօք շողայցենե... կը կարդայ չաղախ իցեն: Այսպիսի ընթերցուած մը հայերէն չէ: Բայց պէտք է յիշեցնել հայագէտին, որ Ասկեդարեան հայերէնով շողայ կը նշանակէ պարգապէս «Երեւալ»։ ան հերկու օրինակ.— Թեւ պէտ շողայր, ոչ իշխեաց մտանել. Ասկ. Պօղ. Ա. էջ 412. Զի՛նչ արգել իցէ հոգւոյն սրբոյ գալ և շողալ գմեօք. և ոչ միայն վարպար եկեալ շողալցէ, այլ և լցուցանիցէ զսիրտս մեր (անդ, էջ 868):

Ուրիշ տեղ մը (էջ 178) «զգայականացն անշընչից» կը սրբագրէ գկայական ամեն անշընչից (անշընչները հաստատեց). բայց հայերէնի ամենաշնչին ճաշակ ունեցողը կ'ըսէ՝ որ ասիկա ոչ միայն հայերէն չէ, այլ և կարծեմ ոչ մէկ լեզու չէ: (կայական ածական է և ոչ գոյական, յետոսկեդարեան բառ է և Եզեիկի ժամանակ չկար, ամեն անշընչներու համար չի գործածուիր, այլ րեղի իսկ անշընչից հայցական չէ, այլ տեղական տրական):

Հ. ԱՆՈՒՆԻՍԿ



Զ Ա Ի Ե Շ Տ

ԱՊՈՒ ԳԱՍԵՄԻՆ ՀՈՂԱԹԱՓՆԵՐԸ

(Շար. տես Բազմ. 1926 էջ 150)

ՀԱՆՆԻՍ ԵՐԿՐՈՐԻ

Գործողութիւնը կը կատարուի Ապու Գասըմի տամ մէջ:

Հայտար. — Զէ, չէ, չափազանցութիւն չէ ըսածս. աւանին մէջ ամենուն բերանն է քու ազահութիւնդ, Ապու Գասըմ. ամէն տեղ կը խօսին ու կը խնտան մանաւանդ այլանդակ հողաթափներու վրայ: Մէկ հատիկ աղշկանդ էրիկն եմ, ուր որ գիս տեսնեն՝ մատով իրաւուն կը ցուցնեն ըսելով. «Ահա Ապու Գասըմին փեսան»։ ամօթէս գետին կ'անցնիմ՝ երբ գրեզ Մահոթ Սիւլէյմանին հետ կը բաղդատեն և անկէ պակաս կծծի ու փնդի չէ, կ'ըսեն:

Գասըմ. — Ինչ, Հայտար բէկ. գիս այն գար. չելին հենց կը բաղդատեն:

Հայտար. — Եւ իրաւունք ալ ունին, քանի որ այն այլանդակ հողաթափները մէկդի չենտես և տեղը մարդու վայել զոյգ մը կ'օշիկ չգնեն, վրաջ զլուխդ աւելի մաքուր պահելու հոգ չտանիս, մէյ մը բաղնիք չերթաս չլուացուիս...

Գասըմ. — Բայց գիտես, բէկ, որչափ ծախքի կը նստի այդ ըսածներդ. նոր զգեստ, նոր կօշիկ, բաղնիք, նոր զլխաթի, դեռ չգիտեմ ինչ. ամուսնան մը եկամուտս պէտք է փճացը. նեմ այդ աւելորդ զարդարանքներուն համար:

Հայտար. — Աւելորդ զարդարանք, ինչ որ ամենակարեւոր են թէ առողջութեանդ և թէ մարդկանց մէջ չենքով չնորճով մտնելու և ամենուն ծաղրի նիւթ չըլլալու համար: Ապու Գասըմ, իրաւ կ'ըսեմ, շատ կը զարմանամ. դուն առաջ՝ այսչափ ազահ չէիր՝ քանի որ շատ հարստացած չէիր. ամէնքը կը պատուէին զքեզ և ամէն տեղ զովեստներ միայն կը լսէի վրայօթը. քանի աւելի հարստացար՝ այնչափ աւելի սկսար ազահնալ: Աղշիկը ինծի տուիր, որովհետեւ յանձն առի առանց օժտի հետը կարգուիլ, հարսնիքին համար հարկաւոր եղած ծախքերն ալ ես ինքս ընելով. որովհետեւ զինքը կը սիրէի՝ ինչպէս հիմայ ալ կը սիրեմ ու գոհ եմ... Եթէ այնպէս ըրած չըլլայի՝ խեղճը գուցէ մինչև օրս առանց ամուսնի՝ տանք մէջ պիտի պատուէր՝ վրաջ բեռ մտալով:

Գասըմ (աւանդած). — Հայտար Զէքի, աղջիկս քեզի պէս պատուաւոր և առատաձեռն մէկուն տալուս վրայ զոյգացած չեմ. բայց եթէ քովս մնար՝ ինծի բեռ մը չըլլալէս գատ՝ մեծ չահ ալ կ'ունենայի, որովհետեւ իրեն տեղ ստի՝ պուեցայ խնամակալ կին մը բռնելու՝ տանը հարկաւոր ծառայութիւններն ընելու համար, մինչդեռ աղջիկս իր հանգուցեալ մօրը պա.

կասն զգացնել տուած չէր ինծի: Այնպէս խելացի եւ աշխատասէր աղջիկ մը միթէ ինք իրեն մէջ հարուստ օժտու մը չէ՞, և դուռն իրաւունք չունիս գանգատելու եւ կամ իբրեւ ազահութիւն մ'երեսս զարնելու թէ աղէկաստ օժտ չտուի:

Հայտարար. — Լաւ, լաւ, Գասրմ աղա, ատոր համար մի ներանար. այնչափ գոհ Ձեացեր եմ աղջիկդ առնելէ՛ս որ հիմայ ալ յօժարութեամբ բաղնիքիդ ծախքը ես կը վճարեմ, միայն թէ դուն ալ իմ խնդրքս կատարէ, ե՛լ հիմայ անմիջապէս բաղնիք գնա՛, լուացու՛, մարտունէ՛. զոյգ մը նոր կօշիկ ալ քեզի կ'առնեմ՝ որպէս զի մէկդի թողուս անճոռնի հողաթափաներդ, որոնցմով ամենեւնի ծաղրի ինքի եղեր ես... Կը կատարեն խնդրքս:

Գասրմ. — Եւտառն ըսելով՝ աւելի կը փափաքէի որ այդ առատաճեռութեամբ ծախսեցիք մեծ դրամն ինծի տալիք որ խնայողութեամբ գործածէի. բայց քանի որ կը փափագիս ըրած ընծադ ընդունիմ՝ չէ չեմ ըսեր. Խօսքս եւս տամ անմիջապէս բաղնիք երթալու, և երբ ըսած կօշիկներդ գան՝ հողաթափներս ալ չգործածելու, այլ դարանի մը մէջ պահելու:

Հայտարար. — Դարանի մը մէջ... հա՛, հա՛, հա՛, լաւագոյն է՝ զանեւ աղբիւսը նետել տա՛ս՝ որ յետոյ փորձութիւն չունենաս դարձեալ գործածելու... աղբիւսը, անեղք տեղն աղբիւսն է և ոչ թէ դարանը: Ահա կ'երթեմ նոր կօշիկներդ գնելու և դրկելու. մինչև որ բաղնիքդ լիցցենա՛ յուսած անեղք ալ կը հասնին տունը. (կը մէկնի):

Գասրմ (առանձին). — Ինչ օրերու հասանք, տէր Աստուած, ինչ թշուառ օրերու... ինչալորութիւնն յանցանք կը համարեն... Այս ջահիլներն ազա՛ր կը համարին, կը մեղադրեն մէկը՝ թէ որ իրենց պէս ճոճան կօշիկներ կամ զարդարուն հողաթափներ չհագին, լա՛նճաւոր փայլուն չուխայէ լօղիկ չկրէ ուսին, քաշմորի չալով գօտի չկապէ... Ահա այսպիսի անճամուռն բաներու կը փատնեն դրամին և կը գանձատին որ ինծի նման չեն հարստանար... Ուրիշներուն ճակտի քրտինքով ժողոված բուռ մ'ոսկիներուն կը նախանձին և գանտեղ հաւաքելիս ազահութիւն կը համարին. (կ'երթայ ոսկիներուն զգործը կը բանայ). գրամին յարգը չեն ճանչնար ամանին (քուտովը հիւնելով, խառնելով զգործը մէջի ուսկիները, փայլուն մետալներու կոյտ մը)... Տես, նայէ՛, Գասրմ. ո՛հ, ինչպէս ասոց փայլը մարդուս աչքերը կը լուսաւորեն, ծայրը՝ ամբողջ սիրտը կը ճխացնէ, տեսքը՝ հոգին կ'ուրախացնէ. մեղք չէ՛, սիրուն ոսկիներս, իմ շողողուն գաւազներս, արդար վաստակներու, խելացի խնայողութիւններու ծնունդն ենք, մեղք չէ՛ հեռացնեմ, ցրուած գնե՛ք... և որուն ձեռքը... բաղնիքաւնին, կօշկակարին, զգեստավաճառին և դեռ չեմ գիտեր քա՛նի գէշիք-զըխիւներու ձեռքը, և ինքզինքս զրկեմ... (ստամարայն կը շուռէ)... Ո՛հ, մարդ

կու գայ. վայ զլիւսութեան թէ որ տեսնէ. (խաղցեալ զգործը կը կոպէ և կը տանի կը պահէ): Օսման (ճիւղ մ'ունելով). — Աղա, սարսափելի բան մ'եկայ պատմելու:

Գասրմ. — Ինչ կայ, տղայ. այլալայ ի՛նչերես. ինչ եղած է:

Օսման. — Աղա, Մահտի Սիւլէյմանը գարուսի ինչ մահ մ'ունեցեր է...

Գասրմ. — Ինչ, մնաւ այն զգուշիկ ազանը: Օսման. — Եւ ինչ սոսկալի եւ տարօրինակ մահով:

Գասրմ. — Ինչպէս, ինչպէս, պատմէ՛:

Օսման. — Մահտին իր ոսկիները, շատ շատ ոսկի կ'ըսեն, թաղեր է եղեր քովի լերան վրայ գտնուած այրի մը խորը, որուն մուտքն այնքան խիտառիւտ թուփերով ու փուշերով գոցուած է եղեր՝ որ ամենն մոռցուած տեղ մ'է եղեր և բուս մէկը հոն ուրք չի կոխեր եղեր. միայն Մահտին այն մացառներուն մէջէն իրեն համար ծածուկ նեղ անցք մը բացած ըլլալով՝ հոն կը տանի եղեր իր ժողոված ոսկիներուն և այրին խորը փորած խոռոչի մը մէջ կը պահէ եղեր, վստահ ըլլալով որ հոն մէկը չի կրնար գալ, գտնել ու գողնալ:

Գասրմ. — Այդ բանը պատմողն ո՞վ է, ուս. կի՞ց լսեցիր:

Օսման. — Աղա, կ'ըսեն թէ ինքը Սիւլէյմանը վերջին չունը տալէն առաջ պատմեր է զլիւսուն եկած փորձանքը քովի եղողներուն:

Գասրմ. — Ուրեմն գանձը գողցե՛ր են. որչափ ոսկի ունի եղեր:

Օսման. — Զատ, շատ ոսկի, կ'ըսեն. գանձը գողցող եղած չէ: Առանց հարցումներ ընելու՝ համբերութիւն ունեցե՛ք, աղա, որ կարգով տեղիդտեղը պատմեմ՝ հանդիպածը, ինչ որ աչքովը տեսնող վստահին մէկէ մը լսեցիր:

Գասրմ. — Լաւ, առաջ տար ուրեմն ըսելիքդ:

Օսման. — Գու ծառայութեանդ մտնելէս առաջ՝ ես շաբաթ մը Մահտի Սիւլէյմանին քով ծառայեցի, և ստիպուեցայ թողուլ փախիլ՝ կրած տառապանքներուս պատճառով: Այս դէպքը պատմեր էի ֆէմալ բարեկամիս, որ ձեր փեսային Հայտար բէկի ծառան է և զիս եղբոր պէս կը սիրէ: Փէմալ ուղղով Մահտիին ինծի բրած անիրաւութեան վրէժն հանելու՝ կատաւկով ճին ձեռացեր է՝ պահուելու տեղէ մը խօսելով, և հատուցուցեր է Մահտիին թէ հիւնելի իր պահած ոսկիներուն տեղը գիտեն և ցնացեր են գողնալու: Մահտի խելքը զլիւսն թոցնելով՝ վազեր է դէպ ի հոն...

Գասրմ. — Տխմարը, ուրեմն ճիւղներու կը հաւատայ եղեր:

Օսման. — Ինչպէս կ'երեւի՝ կը հաւատայ եղեր: Հոն հասնելով՝ կը գտնէ ոսկիները, որ ճինքն իրեն տարուած չեն եղեր. բայց միւսը դիւնով որ ոսկիներուն տեղն իմացուեր է և կրնան գալ գողնալ, գանդը սնտուիկի մը մէջ լեցուցած՝ կոնալին կը կապէ, և կ'երթայ եղեր ուրիշ անծանօթ է աւելի ապահով տեղ մը ծածկելու: Լերանը կողքէն զաւիպով մի՛շ շած ժամանակ, կը տեսնէ որ քանի մը ծիւ-

ւոր՝ հրացաններով գինուած՝ իր ետեւէն կու գան ձիերէն վազցնելով։ Ոստրոզներ եղեր... են, բայց ինքը գանդոք աւազակ կարծելով և համարելով որ սակերն յափշտակելու կու գան, կը սկսի խնխխաբար դէպ ի վար փախչի։ շփոթութենէն ու վախէն՝ նամբուն ուղղութիւնը կորսնցնելով՝ կը խոտորի դէպ ի թուփերը՝ անոնց մէջ ծածկուելու համար։ Բայց լսելով ձիերուն ոտքի գրըզդիւնը՝ որ դէպ իրեն կը մտածենա՝ կը շարունակէ դէպ ի վար վազել, մինչև որ առանց անդգրադառնալու անդունդի մը եզերքն հասնելով՝ կը գաւհալիթի հոն, ու ծառի կոծկերու և փայտերու զարնուելով՝ կը գլուտորակի կը հասնի անդունդի որն յատակը՝ անդամները բզրկաւած, գլուխը ճեղքուած, մարմինը բոլոր արիւնջուայ, բայց սակիներու սնտուկը դեռ ուսին կապուած։

Գասրւմ. — Խեղճ Մահաթ. հոն մեռած գտնուեր է ուրեմն։

Օսման. — Իր գահալիթիւը հետեւէն տեսնողն, իր դէպ հոն կը դիմեն, գգուլութեամբ կ'իջնեն անդունդին յատակը և կը գտնեն Մահաթին վերջին շունչը տալու վրայ։ հագրի կրնայ գլխուս եկածը պատմել և շունչը կը փչէ կը մեռնի։

Գասրւմ. — Ոսկիներն ինչ կ'ըլլան։

Օսման. — Մարդիկ կ'ընթան անմիջապէզ եղածը կ'իմացնեն դատի էֆէնտիին, որ իր ծառա, ներս հոն զրկելով՝ Մահաթին հոն կը թաղեն և ոսկիները դատիին կը տանին։

Գասրւմ. — Եւ մէջնորին կը բաժնեն...

Օսման. — Չէ. աղա, չեն բաժնիր. դատին կ'ուրիշ գտնուի ծառայեցնելու հիւանդանոցին ինտեքնան։

Գասրւմ. — Հիւանդանոցին... ինչ հիւանդաւորն է։

Օսման. — Զէք գիտեր, աղա, որ Ղատի էֆէնտին աւանդաւ մէջ մեծ հիւանդանոց մը պիտի շինել տայ, ուր պիտի հաւաքորին գաւառին մէջ գտնուած բոլոր աղքատ հիւանդներն ու ձրի պիտի դարմանուին։

Գասրւմ. — Զրի. սակայն պիտի գտնեն անոնց համար ըլլալիք ծախքը։

Օսման. — Ժողովուրդէն պիտի հաւաքեն թէ շինութեան և թէ հիւանդներուն դարմանուելու համար կարեւոր եղած դրամը։

Գասրւմ. — Այդ ինչ յիմար մտածութիւն է... որ տիմարն իր դրամը պիտի ուզէ տալ տաւրին հիւանդը հոգալու համար... Ինչ օրերու հաստեղ. չըլլուիլիք բանիւր կը մտածեն՝ ու բիշներէն դրամ չորթնելու համար... Ես փառա մ'ալ տալիք շունիմ այդպիսի անխելք գործերու... Հիմայ գլուխս չիմ ուզեր ճաթեցնել այդպիսի մտմտութիւնըով. հիմակու հիմայ օգտուիմ Զէքի բէկ փեսայիս առաւառ, ձեռն ազնուութենէն՝ որ ինծի ձրի բաղնիք մը կը հրամցնէ և զոյգ մ'ալ ձրի նոր կոշիկ, ներս Ուստի դուս տունը կեցիր, Օսման, մինչև որ բաղնիքն դառնամ։ (ձողարսափներն ձագնելով՝ կը մեկնի)։

Օսման (միեկն). — Բարեօրեա մէկն է անքա-

Մահաթի պէտ մարդուն դժբախտութեան համար ցաւ ցըցուց. բայց կարծեմ աւելի ցաւ եղաւ որ անոր ոսկիներն ուրիշի ձեռքն աւանան... Իսկ հիւանդանոցի լուրը լսելուն՝ կարծես թէ լուերու քանակ մը վրան յարձրեցան և զիսքը կը կնէին. հակառակը կը չփշփշէր, թեւերը կը թերէր, կուրծքը կը կսմթէր, մտաւ, ծելով անշուշտ որ իրմէն ալ պիտի գտն փառա ուզեն...

Քեմալ (ներս մտնելով). — Օսման, լսեցի որ տէրզ բաղնիք գնացեր է եղբւր, իրաւ է, և դեռ չդարձաւ։

Օսման. — Իրաւ է, բայց դեռ չդարձաւ. ժամ մը կ'ընէ որ հոս դառնալուն կը սպասեն։

Քեմալ. — Ուրեմն բան մը չես լսած ինչ հանդիպեր է։

Օսման. — Ուրմն, աղայի՛ն, ի՛նչ բան։

Քեմալ. — Աղայիդ չէ, Օսման, այլ դատի էֆէնտին։

Օսման. — Ի՛նչ հանգիպեր է դատիին։

Քեմալ. — Զուարճալի բան մը... Ինչպէս կ'ըլլի ընդ յայ բաղնիքը որը աղադ լուացուելու գնացեր է, թիչ մը վերջը նստի դատին ալ գնացեր է ա լուացուել, և երբ տարտ ելեր է զգեստներն հագուելու՝ տեսեր է որ կոշիկները գողցուեր են. ասդիս անդին փնտռե՛ր չեն գտած, բայց անոնց տեղը գտեր են աղայիդ հողաթափները. ինչպէս կ'ընեն՝ զանոնք աւաղադ հոն ձգեր ու դատիին կոշիկներն հագուեր դուրս ելեր է։ Ամենուս բերանն է որ Ալաւ Գասրւմ գողցեր է դատիին նոր կոշիկները, բայց ես չհաստատով՝ հկայ ստուգելու։

Օսման. — Զէ, Քեմալ, չէ. աղապս պատուաւոր մարդ է, զող չի կրնար ըլլալ. սխալմուշք մը պիտի ըլլայ։ Լսեցի իրմէն որ Հայտար բէկը խոտացեր է. աղայիս ոչ միայն բաղնիքին վարձը վճարելու, այլ նաև զոյգ մը նոր կոշիկ ալ ընծայելու. ուստի անշուշտ աղապս կարծած պիտի ըլլայ որ Հայտար բէկի զրկած ներս են դատիին կոշիկները, ուստի հագուեր դուրս ելեր է՝ հողաթափներն հոն թողլով։

Քեմալ. — Դառ կարելի է որ այդպէս ըլլայ. բայց ես այն գիտեմ որ դատին կը կոշիկները տանողին դէմ զայրացած՝ ամէն կողմ մարդ զրկել է որ աղադ գտնեն և հոն բաղնիքը տանին իբրեւ զող մը պատուելու և պատժուելու համար։

Գասրւմ (ներս կը մտնէ գուալար դեմքով, վրան գրոյիւր կոկիկ ու մաքրուած և դատիին կոշիկներն հագուած). — Այլիք փեսաւ. ինչպէս ալ շուտով խոտմուշքը կատարեց. մտածե՛ր է ազնուութեամբ իբրեւ «բաղնիքը աւանդ» ըսելու համար՝ այս զոյգ մը նոր կոշիկներն հասցնել՝ որ հագուելու ելած ժամանակս պատրաստ գտնեմ։ Ինչպէս ալ օտքերուս լաւ յարմարեցան. ուստի ինչպէս իրեն խոտմուշք ե՛ր հոն թողուցի հողաթափ, ներս որ ինչ կ'ուզեն ընեն, և եկայ որ երթամ անմիջապէս փեսայիս շնորհակալ ըլլամ...

Օսման. — Աղա, սխալմուշք մը կ'աւ. զոյգ կոշիկները Զէքի բէկը զրկած չէ, այլ դատի

էֆէնտիին կօշիկներն են, որ հիմայ գտք գիտառելու համար չառնչներ դրկիւ է ետեւէ՞ որ իբրեւ զող մը բռնեն իրեն տանին: Ասոր համար անա ֆէմայն հոս փութացեր է իմացը, ննլու որ...

Գասրմ (զարմանքով). — Ի՞նչ կը լսեմ... Ալ լա՛հ, Ալ լա՛հ... դաստիին կօշիկներն են... (Քեմային) իրա՛ն կ'ըսես:

Քեմայ. — Այո, Գասրմ աղա. քու հանուելէդ ու բաղիւիք մտնելէդ փըշ մը վերը՛ը՛ դաստի էֆէնտիին ալ եկեր է լուացուելու, և քու հաւաւած տեղիդ մօտ՝ հանուելու ու բաղիւիք մտնել է. և երբոր քու մեկնելէդ վերը ինքն ալ դուրս էլեր է՝ կօշիկներն հոն չէ գտած, այլ անոնց տեղ քու հողաթափներդ՝ որ ամէնքը կը ճանչնան՝ հոն գտնելով՝ կարծեր է որ գտն գողցեր են, և...

Գասրմ. — Այո գլխուս... Հիմայ անմիջապէս կ'երթամ սխալմունքը դաստիին իմացելու և թողութիւն խնդրելու... (Միեւնի մեկնելի կ'ուզէ՝ կը մտնեն դաստիին երկու լաւառչներն և զինքն երկու քնեռնէ կը բռնեն):

Հիւսէին. — Ահաւսիկ գողը. բռնեք որ քիախչի... (Գասրմին) Երթանք, դաստի էֆէնտիին գտք բազմիքը տեսնել կ'ուզէ՛, հ'ուզէ ազնիւ քիչֆո հարցնել, հ'ուզէ իմանալ որ իբ Կօշիկները ոտքերուդ չաւ յարմարե՛ր են:

Գասրմ. — Թող տուէք, աղաներ, լաւուշի պէտք չունի՛ր, ես ինքս արդէն կու գայի՛ դաստի էֆէնտիին՝ սխալմունքս իմացնելու և ներսուծի խնդրելու: Տեսնողներն ինչ պիտի բռնեն, ինծի պէս պատառում մարդը՝ գողի ու պէս չաւառչները քաշչառելով տանին... Ահա ձեզի մէյմէկ դուռու... Թող տուէք որ հետերինդ ազատ երթամ...

Ետառֆ. — Մէյմէկ դուռու... Ինչպէս ալ իր դուռուչներով շնորհալի է այս ազահը... Մէյմէկ ոսկի, ոսկի՛ բւշ, գուցէ այն տանն...

Գասրմ (զարմարած). — Ոսկի... Աղա, գիտե՛ս ոսկի ինչ բնէ է... Ինչպէս դժուար է ոսկի մը վատակիլը...

Հիւսէին. — Այս ազահին հետ, Ետառֆ, զուր է խօսիլը. հոս երկու ոսկի չ'ուզէր տա՛լ հոն տատուերկուքը պիտի տայ... (Քաշչնելով Գասրմի) Երթանք, երթանք...

Գասրմ. — Ահ... Թողուցէք, կու տամ, կու տամ, մէյմէկ ոսկի. (կը վճարէ)... հարամ եղաւ բաղնիքս... (Հետերինէն ազատ՝ դուռն կ'ընէ):

Քեմայ. — Խեղճ Ապու Գասրմ. կը տեսնեմ որ քածիդ պէս, Օսման, բարի ու պատիւը գիտցող մարդ մ'է... Ափսոս, որ ազահութիւնը վրան տրե՛ր է:

Օսման. — Իրաւ է, և թէ որ մէկը կարենար գինքն այդ պիտին ապտուել, դարձնալ կ'ըսեմ, շատ կամարեալ մարդ մը պիտի ըլլար: Քեմայ. — Է՛հ, հոգ մ'ընեք. դաստի էֆէնտիին անոր խնջոք գլուխը բերել կու տայ, անոր ճանկն ինկողը կամայ ականջ առաքինի կը գտնայայ:

Օսման. — Ի՞նչ կ'ըսես, Քեմայ. Ինչ պէտք եմ

ընել հիմայ որ աղայիս օգնութեան հասնիմ: Գիտե՛ս որ ինքն հիմայ վրաս գուր ունի. ոչ միայն հետք բարի զգացմունքով կը վարուի, այլ նաև ամտական աւելցուց, հիմայ կօշիկը կը վճարէ, չափաւոր սնունդ ալ կու տայ, և այս հազած նոր զգեստներս ալ իրեն բարու թննէ են:

Քեմայ. — Կ'արժէ ուրեմն որ օգնե՛ր իրեն, բայց չեմ գիտեր ինչ օգնութիւն կրնայ գալ ձեռքնէս: Պէտք է այնպէս մէկը գտնել որ հաւանալ իրեն համար դաստիին քով բարեխօս ըլլալ:

Օսման. — Այդ մէկը կրնայ ըլլալ քու աղադ՝ Հայասար Զէքի բէկը, որ աղայիս փեսան ըլլալով և դաստիին ալ բարեկամը՝ կրնայ այս գործը շտե՛ղ:

Քեմայ. — Լաւ բարի. կ'երթամ ուրեմն գինքը փնտռելու. (կը մեկնի):

Օսման (միայնակ). — Ահա ժամ մ'անցաւ և դեռ ազատ չեարձաւ. ըլլալ թէ դաստի գինքը բանալը դարձ ըլլալ, երթա՛մ տեսնեմ (դէպ ի գոչար երթալով)... Բայց, ո՛հ, անա աղաս ինքը կու գայ՝ դաստիին կօշիկները դեռ ոտքը և իր հողաթափներն ալ ձեռքը բռնած... Ինչպէս տխուր է...

Գասրմ (ներս մտնելով). — Բաղիւք զնա, բաղչնիք զնա. լուացուէ՛ մարդուէ՛... Ահա թող գայ հիմայ փեսաս և տեսնէ թէ իր խորհուրդն ինչ ձին բերաւ զլուռու... (գետին կը ննտէ ձողաքափները)... Կատարձ գատին ոչ սխալ մունք ուզեք հասկնալ, ոչ աղաչանքի մտիկ ընել, ոչ պատաճառաբանութիւն լսել. «Ինչ յանդգնութիւն է, կը գտար, դաստիին կօշիկներն հագուի՛ր», և սպառնացաւ զիս ամիսով բանալը ձգել և ամէն օր յիսուն խարազանի հարուած տա՛լ եթէ չուզէի վճարել իրեն Կօշիկներուն կրկին գինը և երեսուն ոսկի ալ չիկնէր: Հիւսէինը օգտին համար տուա՛ւ զանց տալ:

Օսման. — Զուգե՛ք իր կօշիկներն ետ առնել: Գասրմ. — Զէ, չուզեք. շատ զարմ մարդուն մէկն է... գատիին գործածած բանքը նուիրական են, ըստ, և երբ ուրիշ մը գործածէ՛ պղծաւած կը համարուին. ուստի վճե՛ք որ իրեն համար որ կօշիկ մ'առնեն և ես գինը վճարեմ, անկէք զատ այս հազածներուս գինն ալ վճարեմ ու գործածեմ, և դեռ երեսուն ոսկի ալ վճարեմ...

Օսման. — Եւ դու վճարեցիր, աղա...

Գասրմ. — Ինչ կարելի էր ընել, տղայ. գրեթէ բոնի առին ձեռքէս այդքան դրամը, և ինչու տալով ձեռքս տուի հողաթափներս ալ՝ որ տուն տանի... Անիծած հողաթափներ, ինչ ձին բերին զլուռու... Զէքի բէկը կ'ըսէր աղբիւսը ննտէ, և իրաւունք ունէր. ես գաւառի բաղիւիքը թողուցի՛ մտածելով որ ուրիշ կարտի մը կրնային ծառայել, գիտես որ դեռ նոր կարկանդ տուեք էի, բայց յիմարու թինն ըրի: Որոշոր են այնպէս անհետացնեմ անոնք՝ որ ալ երկրիս երեսը չըլլեն. այս գինը պիտի տանիմ պարտիզիս մէկ անկիւնը խոր

փոս մը փորեմ և անիծածները մէջը թաղեմ...
 գէթ պարարտութեան տեղ ծառայեն... Բայց,
 ափսոս, հիվ պիտի դարձնէ ինծի իմ կորստն,
 ցուցած ոսկիներս (չալահառայ և յրեալ՝ ա-
 բոռի մը վրայ խյնալով)։ իմ խեղճ ոսկիներս,

իմ տիրուն փայլուն զաւակներս... իմ կեանքս
 ... իմ ուրախութիւնս...

(Վարազդյորը կ'իջե՛ն)

(Շարայարեղի)

Հ. Ա. ՏԻՐՈՅԵԱՆ

ԱՅԼԵԻՍԹԻԲ

ՀԱՅ ՆՈՐԱԳՈՅՆ ԿՕՄՊՕԶԻՏՈՐՆԵՐ

(20-րդ դար)



(Շարունակութիւն տես Բազմավէպ, 1926 էջ 154)

Ե. — ԱՐՇԱԿ ԱԴԱՄԵԱՆ

1. Կեանքը

Հայ երաժշտութեան լաւագոյն կոմպոզիտորներից մէկն է Արշակ Ադամանը, որ առանձնապէս ուսումնասիրել է երաժշտութեան փիլիսոփայութիւնը։

Ծնւել է նա Բազում 1884 թականին։ Նրա քոյրերն են Եւրոպայում հռչակ ստացած դաշնակահար Հեղինէ և Եւգինէ Ադամանները։ Մի ամբողջ գեղարուեստաւէր ընտանիք, որը մեծ ուշադրութիւն է դարձնում երեխաների ուսումնական և գեղարուեստական դաստիարակութեան վրայ։ Այդ միջավայրում էլ նրա երաժշտական դաստիարակութեան զործը դրւում է լաւագոյն հիմքերի վրայ։ Նրա ծնողները հրաւիրում են ամենալաւ և ամենայայտնի ուսուցիչներին — ֆրիստափոր Կարա — Մորզա և Ռեթինսկի։ Վեց տարեկան հասակում նա իր ցոյքերի և եղբայրների հետ սովորում է դաշնամուր և ջութակ նւագել։ Նա ուսուցչի տաժ գասը նւագում է միայն լսելով։ Այդպէս շարունակւում է մի ամբողջ ամիս և ուսուցիչը չի հասկանում, որ նա նոթաներ չի ճանաչում։ Դա ցոյց է տալիս, թէ նա ինչքան լաւ լսողութիւն ունի։

Միջնակարգ կրթութիւնն ստանում է նա Բազուի գիմնազիայում, ուր առաջ է տանում նաև իր երաժշտական դաստիարակութիւնը։ Նստած դաշնամուրի առաջ օրը 5-6 ժամ նւագում է իր ամենասիրած երաժշտագէտի՝ Բեթհովէնի ստեղծագործութիւնները և միաժամանակ փորձում է երաժշտական կտորներ հեղինակել։ Նոյն շրջանում էլ նա ուսումնասիրում է Մարքսի պատմական մատերիալիզմը։ Վերջացնելով գիմնազիան՝ Բազուից անցնում է Պետրոգրադ (այժմ Լենինգրադ) և մտնում տեղական համալսարանը, ուր ուսումնասիրում է իրաւաբանութիւն, էգանոմիկա, փիլիսոփայութիւն և երաժշտութեան թէօրիա։ Պետրոգրադում նա ցոյց է տալիս իր երաժշտական տաղանդի ոյժը։ 18 տարեկան հասակում գրում է մի մէլոդիկլամայիւս, և ընկերների խորհրդով ներկայացնում Ռուսաստանի ամենամեծ